

**Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2015թ.-ի**

**տարեկան հաշվետվություն**

**Կազմակերպության անվանումը ՀՀ Տավուշի մարզպետարան**

**ՀՎՀՀ 07611324**

**Ներքին աուդիտի բաժնի վարիչ Նաիրի Մելքումյան**

Տարեկան հաշվետվությունը կազմվել է ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանի 306 կետի աղյուսակ 23-ով սահմանված կառուցվածքով:

Հաշվետվությունը ներկայացվում է Տավուշի մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին: Հաշվետվությունն ընդգրկում է 2015թ.-ի ներքին աուդիտի հաստատված ծրագրով կատարողականը, որի նպատակն է կատարել համեմատություն ներքին աուդիտի բաժնի կատարողականի և ներքին աուդիտի տարեկան ծրագրի միջև, բացահայտել ի հայտ եկած շեղումները և դրանց պատճառները:

2015թ.-ի ներքին աուդիտի հաստատված ծրագրով կատարողականի և ներքին աուդիտի ծրագրի միջև շեղումներ չեն եղել: Ներքին աուդիտի հաստատված ծրագիրը ամբողջությամբ կատարվել է, ներկայացվել է Ներքին աուդիտի կոմիտեին, մուտքագրվել Ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգ:

2015թ.-ի ներքին աուդիտի հաստատված ծրագրով իրականացվել է 45 աուդիտորական առաջադրանք, որից 22 միավոր մարզային ենթակայության հանրակրթական ՊՈԱԿ-ներում, 22 միավոր մարզային ենթակայության առողջապահական ՓԲԸ-ներում, մարզպետարանի գնումների գործընթացի մասով: ՊՈԱԿ-ներում և ՓԲԸ-ներում իրականացվել է ֆինանսական աուդիտ, գնումների գործընթացում՝ համապատասխանության աուդիտ:

Իրականացված աուդիտի արդյունքում առկա են 116 միավոր թերություններ և խախտումներ և առաջարկություններ.

- Եկամուտների և ծախսերի հաշվառումն չի իրականացվել հաշվեգրման եղանակով
- Նյութական պատասխանատու անձանց հետ լիակատար նյութական պատասխանատվության վերաբերյալ պայմանագրերի բացակայություն և ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 240-րդ հոդվածի պահանջների խախտում
- <<Դրամարկղային գործառնությունների մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 08.10.2003թ. N408-Ն որոշման պահանջների խախտում

- Ապրանքների ձեռք բերումը կատարվել է առանց հիմնավորվող փաստաթղթերի (ՀՀ կառավարության 25.08.1998թ N 525 որոշում)
- Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի սխալ ձևակերպում
- ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 02.06.2000թ.-ի թիվ 102 կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին հրամանի և 31.10.2007թ.-ի թիվ 787-Ն ՊԿՀ-ների և ՊՈԱԿ-ների լրիվ մաշված գույքի դուրս գրման կարգը հաստատելու մասին հրամանի պահանջների խախտում:
- ՀՀ Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի պահանջների խախտում
- ՀՀ Գնումների մասին >> ՀՀ օրենքի պահանջների խախտում
- Ֆինանսական հաշվետվությունները ճիշտ և արժանահավատ կազմելու պահանջների խախտում
- Հաստիքային միավորների վերանայման առաջարկություն
- Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարման առաջարկություն
- Հաստատված նախահաշիվներից՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների ավելի ծախսումների առկայություն
- Պաշտոնատար անձանց նկատմամբ կարգապահական տույժի կիրառման առաջարկություն

2014թ.ի ընթացքում ներքին աուդիտի բաժնի 2 ուսուցանվող աուդիտորներ ազատվել են աշխատանքից և նույն թվականին աշխատանքի են ընդունվել երեք ուսուցանվող աուդիտորներ, որոնք որակավորվել են 2015 թվականի ընթացքում:

2015թ.-ի ընթացքում ներքին աուդիտի բաժնի 2 աշխատակից մասնակցել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին, հաջողությամբ ավարտել դասընթացներն ու ստացել համապատասխան հավաստագրեր:

2015թ.-ի ընթացքում ներքին աուդիտի հաստատված ծրագրով իրականացված 45 աուդիտի առաջադրանքների հետ մեկտեղ աուդիտի տիրույթի միավորների կողմից լրացվել, հաստատվել և ներքին աուդիտի բաժին է ներկայացվել 45 ստուգաթերթ:

Ներքին աուդիտի բաժնի կողմից ամփոփվել են ստուգաթերթերի արդյունքները: Ներքին աուդիտի բաժնի աշխատանքը 4 միավորանոց սանդղակով գնահատվել է 3.8 միավոր:

Ներքին աուդիտի բաժնի կողմից ուսումնասիրվել և քննարկվել են ստուգաթերթերով սահմանված ցածր գնահատված ըստ առանձին գնահատման տարրերը, աշխատանքներ

տարվել՝ ներքին ինքնագնահատման միջոցով նշված գնահատման տարրերի գծով որակի երաշխավորում ապահովելու համար:

Ներքին աուդիտի բաժնի կողմից վերլուծության /մոնիտորինգի/ են ենթարկվել բավարար գնահատված ստուգաթերթի առաջադրանքի իրականացման որակի վերաբերյալ կետերը, քննարկվել և այդ ուղղությամբ իրականացվել են մասնագիտական գիտելիքների խորացման, կարողունակության թեստեր /ինքնաստուգման հարց ու պատասխաններ/: Ինքնաստուգման նպատակով օգտվել ենք նաև հանրային հատվածի Ներքին աուդիտի որակավորման և շարունակական մասնագիտական վերապատրաստման թեստավորման հարցաշարերից: Արտաքին գնահատում չի իրականացվել:

Ներքին աուդիտի որակի երաշխավորման իրավական դաշտի առկայության համար հիմք են հանդիսացել Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը, ներքին աուդիտի գործունեության կանոնակարգը: Նշված փաստաթղթերի նախագծերը կազմվել են ներքին աուդիտի բաժնի պետի կողմից, ներկայացվել մարզպետի և ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը: Քննարկման արդյունքում նշված փաստաթղթերը հաստատվել են ներքին աուդիտի բաժնի պետի կողմից և վավերացվել Տավուշի մարզպետի կողմից: Պարբերաբար ներքին աուդիտի կանոնակարգում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, սահմանված կարգով ներկայացվել Լիազոր մարմին:

Ներքին աուդիտի կանոնակարգով սահմանվել են ներքին աուդիտի նպատակը, դերը, լիազորությունները, պատասխանատվությունները, ներքին աուդիտի դերը ռիսկերի կառավարման, կառավարչական, ներքին հսկողության գործընթացներում, ներքին աուդիտի բաժնի պետի հարաբերությունները մարզպետի և ներքին աուդիտի կոմիտեի հետ, աուդիտի իրականացմանն առնչվող գրանցումների, ֆիզիկական գույքի նկատմամբ հասանելիության, աշխատակիցների հետ հաղորդակցվելու իրավունք, կազմակերպություններին մատուցվող խորհրդատվական և հավաստիացման ծառայությունների բնույթը:

Սահմանվել է ներքին աուդիտի բաժնի գործունեության շրջանակը:

Ներքին աուդիտի բաժինը գործում է մարզպետի անմիջական ենթակայությամբ, չի հանդիսանում մարզպետարանի կառավարչական գործընթացի մաս կամ ռիսկերի կառավարման համար պատասխանատու, որով ապահովվում է ներքին աուդիտորների անկախությունը և օբյեկտիվությունը:

Ներքին աուդիտի բաժնի կողմից ապահովվում է հնարավոր խարդախությունների մասին կասկածների կամ հայտնաբերման բոլոր դեպքերի մասին իրազեկում կազմակերպությունների ղեկավարներին, մարզպետին և Ներքին աուդիտի կոմիտեին:

Մարզպետի համապատասխան կարգադրությամբ ձևավորված է Ներքին աուդիտի կոմիտե, որի ղեկավարը հանդիսանում է մարզպետը: Կանոնավոր կերպով գումարվում են Ներքին աուդիտի կոմիտեի նիստեր, որը ղեկավարում է մարզպետը: Ներքին աուդիտի բաժնի պետի կողմից, որպես նիստի քարտուղար, Ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն է ներկայացվում իրականացված աուդիտի հաշվետվությունները, որի արդյունքում կայացվում է համապատասխան որոշում արձանագրված առաջարկությունների կատարման, թերությունների, խախտումների վերացման ուղղությամբ, տրվում հանձնարարականներ:

Մարզպետարանի Ներքին աուդիտի բաժնի ընթացիկ գործունեությունն իրականացնում է և իրականացման համար պատասխանատվություն է կրում Ներքին աուդիտի բաժնի պետը, ով հաշվետու է մարզպետին և Ներքին աուդիտի կոմիտեին:

Ներքին աուդիտի բաժնի պետը կազմում և Ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն է ներկայացնում մարզպետարանի Ներքին աուդիտի 3 տարվա ռազմավարական և տարեկան ծրագրերը, հաստատում դրանք և ներկայացնում մարզպետի կողմից վավերացման: Պարբերաբար ներկայացնում է ամփոփ տեղեկատվություն կատարողականների վերաբերյալ, իրականացնում վերստուգման գործընթաց:

Աուդիտորական առաջադրանքի իրականացման փուլերում աշխատանքային խմբի ղեկավարի կողմից գնահատվում են աշխատանքային փաստաթղթերը, վերահսկվում աշխատանքների համապատասխանությունն առաջադրանքով սահմանված խնդիրներին և ժամկետներին: Ներքին աուդիտի բաժնի պետի կողմից աշխատանքների կատարման նկատմամբ իրականացվում է հսկողություն, ստուգաթերթերի կիրառման առկայության ապահովում: Մարզպետի, Ներքին աուդիտի կոմիտեի կարծիքների, դիտողությունների, եզրակացությունների հիման վրա իրականացվում է հետագա աշխատանքների կազմակերպման գործողություններ:

Որակի երաշխավորման և բարելավվման ծրագրի ապահովման շրջանակներում և նպատակով, առաջադրանքների իրականացման ավարտական փուլում, աուդիտի ենթարկվող միավորներին տրամադրվում է առաջադրանքի իրականացման որակի վերաբերյալ ստուգաթերթ: Այն լրացվում է աուդիտի ենթարկվող միավորի կողմից և հաստատվում կազմակերպության ղեկավարի կողմից:

2015թ.-ի ընթացքում ներքին աուդիտի հաստատված ծրագրով իրականացվել է 45 աուդիտի առաջադրանք: Հաստատված ծրագրի և փաստացի իրականացված առաջադրանքների միջև շեղումներ չկան: Առաջադրանքների իրականացման ընթացքում շրջանակների սահմանափակումներ տեղի չեն ունեցել, խարդախության հայտանիշներ չեն հայտնաբերվել:

Ներքին աուդիտի բաժնի գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ ենք համարում և ակնկալում ենք Լիազոր մարմնի աջակցությունը հանրային հատվածի աուդիտորական գործունեության համապատասխան ձեռնարկների տրամադրման գործում: Այն հնարավորություն կտա ներքին աուդիտի բաժնի աշխատակիցներին կանոնավոր կերպով, իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս, օգտվել վերանայվող և թարմացվող ներքին աուդիտի ձեռնարկներից: